



ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՆԵԼԻ ՍՐԲԵՐԸ

Սուրբ բառը նշանակում է արդար, մաքուր, աստվածահաճո: Քրիստոնեության առաջին օրերին սուրբ են կոչվել գրեթե բոլոր հավատացյալները: Բայց հետագայում այդպես սկսվեցին անվանվել այն անձինք, որոնք իրենց կյանքը ի սպաս դրեցին եկեղեցու պայծառացմանը և հավատքի ամրապնդմանը՝ արժանանալով մաս մարտիրոսության պսակին:

Սրբության հիմնական պայմանը համարվել է **մարտիրոսությունը**, քանի որ յուրաքանչյուր մարդու համար մեծագույն զոհողությունը իր կյանքը զոհելն է հանուն մի գաղափարի, հանուն մեկ ուրիշի: Եվ այս զոհողությունը, որ լինում է համոզումով և ինքնահոգաբարության, սրբում է մահատակի անցյալի արատները: Այս պատճառով էլ հաճախ մարտիրոսությունը արյան մկրտություն է համարվել այն հավատացյալների համար, ովքեր դեռ չէին մկրտվել: Սրբության պայմաններից են մաս հրաշքներով արտահայտված երկնային վկայությունը, **ս. Գրքի** պատվերների համաձայն ապրելը, սրբակրոն վարքը, քրիստոնեության տարածման և ամրապնդման, ինչպես մաս մարդասիրության և հայրենասիրության համար մղված պայքարը:

Եկեղեցին դարեր շարունակ սրբացրել է բազում աստվածահաճո անձանց՝ ի փառս քրիստոնեության:

Սրբերը բաժանվում են հիմնական երկու խմբի՝ **տոների** և **հիշատակելի**: Տոների են կոչվում այն սրբերը, որոնք հիշատակվում և օրհներգվում են ժամերգությունների և պատարագի ընթացքին, իսկ հիշատակելի՝ որոնց կյանքի և մահվան պատմությունները կան միայն Հայսմալիորքներում: Կան մաս այն սրբեր, որոնք հակառակ-անվանե չեն ընդգրկվել տոնացույցի մեջ. սրանց համար էլ հաստատվել է հատուկ տոն՝ «Ամենայն սրբոց, հնոց և նորոց. յայտից և անյայտից» անունով: Այս պատճառով էլ կան հավաքական և անհատական սրբերի տոներ:

Սրբերի հիշատակը տոնվելիս շեշտը դրվում է նրանց մահատակության վրա: Սրբերի մահվան տոնախմբությունից բացի տոնվում են մաս նրանց կյանքի կամ հիշատակի հետ կապված այլ իրողություններ, որոնք կարևորություն ունեն եկեղեցու համար: Այսպես օրինակ՝ հայ եկեղեցին «Գիտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաորչին մերոյ» տոնից բացի ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը նշում է երկու այլ տոներով ևս՝ «Սըրբոյն Գրիգորի Լուսաորչին մերոյ մուտն ի

վիրապն» և «Սրբուն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն»: Այս իսկ պատճառով մի շարք սրբեր ունեն կրկնակի և ավելի տոներ:

Մեր եկեղեցին ունի ավելի քան 400 հայ և օտար տոների սրբեր, որոնք բաժանվում են հիմնական երկու խմբի.

ա.—ս. գրական.

բ.—հետ առաքելական:

Ս. գրական սրբերն են՝ ա. Նախահայերն ու մահապետները (Ադամ, Աբել, Նոյ, Մեղքիստեղէկ, Աբրահամ, Մովսէս, Ահարոն և այլն), բ. մարգարէները (4 մեծ մարգարէներ՝ Եսայի, Երեմիա, Եզեկիել Դանիէլ, 12 փոքր՝ Ամովս, Մադաքիա և այլն), գ. Հին Ուխտի այլ սրբեր (Մակաբայեցիք, Եղիազար քահանա, Ծամուն, Հոբ արդար և այլն), դ. քրիստոնէության մահապետները (Հովհաննէս Մկրտիչ, Զաքարիա, Աննա, Եղիաբեթ, Հովսէփ աստվածահայր, Աստվածածին և այլն), ե. առաքյալները և ավետարանիչները (Պողոս, Պետրոս, Թադէոս, Բարթողիմէոս, Մարկոս, Մատթէոս, Լուկաս, Հովհաննէս և այլն), գ. Նոր Ուխտի այլ վկաներ (Անանիա, Ծիդա, Հովսէփ Արիմաթացի, Լուսինիանոս հարյուրապետ, Ղազարոս, Մարթա, Մարիամ և այլն):

Ս. գրական սրբերի կարգին դասվում են նաև հրեշտակները (Գաբրիէլ հրեշտակապետ, Միքայէլ հրեշտակապետ և այլն):

Հրեշտակների գոյությունը քրիստոնէական կրոնի հավատալիքներից մեկն է: Հրեշտակ բառը հայերենում ունի ավետաբեր, պատգամաբեր, դեսպան բառերի իմաստ: Ս. Գրքում բազմաթիվ վկայություններ և փաստեր կան հրեշտակների գոյության մասին:

Ըստ քրիստոնէական վարդապետության, հրեշտակների պաշտոնն է փառաբանել Աստծուն, կատարել Աստուծո հրամանները, մարդկանց աղաչանքների և խնդրանքների բարեխոսը լինել Աստուծո մոտ և այլն:

Ըստ Նոր Կտակարանի, հրեշտակները երկրի վրա մասնակցում են մարդու հոգևոր փրկության և Աստուծո թագաւորության հաստատման գործին:

Քրիստոնէության գրականության մեջ հրեշտակները բաժանված են 9 խմբերի՝ 3 դասերի մեջ.

Ա դաս—Աթոռք, Քերովքեր, Մերովքեր:

Բ դաս—Տերությունք, Զորությունք, Իշխանությունք:

Գ դաս—Պետությունք, Հրեշտակապետք, Հրեշտակք:

Հետ առաքելական մահապետ սրբերը բաժանվում են զանազան տեղական եկեղեցիների, ըստ մահապետության վայրի, ինչպէս օրինակ՝ ա. Ամսիոքի եկեղեցու սրբե-

րը (Իգնատիոս Աստվածագգյաց հայրապետ, Ռոմանոս երզնցող, Սիմեոն Սյունակյաց և այլն), բ. Միջագետքի եկեղեցու սրբերը (Հակոբ Մծբնացի, Եփրեմ Խուրի, Մարութա և այլն), գ. Աղեքսանդրիայի եկեղեցու սրբերը (Աթանաս հայրապետ, Կյուրէղ հայրապետ, Անտոն աբբա և այլն), դ. Կապադովկյան Կեսարիայի եկեղեցու սրբերը (Մամաս, Բարսեղ հայրապետ, Գրիգոր Նյուսացի և այլն), ե. Հռոմի եկեղեցու սրբերը (Բագարատ եպիսկոպոս, Երանոս հայրապետ, Սեդեքատրոս հայրապետ և այլն), գ. Պարսից եկեղեցու սրբերը (Մարկոս եպիսկոպոս, Սարգիս զորավար, Աբդյմեհ և այլն), է. Հայոց եկեղեցու սրբերը (Սանդուխտ կույս, Աստվածատուր-Մախոժ, Գրիգոր Նարեկացի և այլն) և այլն, և այլն:

*
*
*

Մեր այս հոդվածաշարի նպատակն է՝ հայ հավատացյալներին ծանոթացնել հայ եկեղեցու տեղական սրբերին, որոնք մահապետությունք, ճգնությունք և խոտովանական մահով փակել են իրենց աչքերը Հայաստանում և հայ եկեղեցու աշխարհագրական սահմաններում: Դրանք են.

- 1.—Թադէոս առաքյալ
- 2.—Բարթողիմէոս առաքյալ
- 3.—Սանդուխտ կույս
- 4.—Սրբար թագաւոր
- 5.—Ադրէ հայրապետ
- 6.—Ոսկյանք
- 7.—Սուքիասյանք
- 8.—Հոփսիսիմյանք
- 9.—Նունէ կույս
- 10.—Մանէ կույս
- 11.—Տրդատ թագաւոր, Աշխեն, Խոսրովադուխտ
- 12.—Արիստակէս հայրապետ
- 13.—Վրթանէս հայրապետ
- 14.—Գրիգորիս հայրապետ
- 15.—Հուսիկ հայրապետ
- 16.—Դանիէլ հայրապետ
- 17.—Անտոն և Կրոնիդէս
- 18.—Ստեփանոս Ուլնեցի
- 19.—Խաղ եպիսկոպոս
- 20.—Վարդանանք
- 21.—Ղևոնդյանք
- 22.—Ծուշանիկ
- 23.—Ատոմյանք Ա
- 24.—Ատոմյանք Բ
- 25.—Թաթուլ, Վարոս, Թումաս
- 26.—7 խոտաճարակներ
- 27.—Գրիգոր Ռաժիկ
- 28.—Աստվածատուր-Մախոժ
- 29.—Դավիթ Դվնեցի
- 30.—Վահան Գողթնացի

31.—Սահակ և Համազասպ Արծրունիներ

32.—Սահակ և Հովսեփ Կարնեցիներ

33.—Գոհարինյանք:

Բացի այս ցանկից, կան նաև այլ արքեր, որոնք աչքի են ընկնում ոչ թե նահատակության, այլ առաքելական-քարոզչական, գրական-աստվածաբանական գործունեության և ճանաչվում են «Եկեղեցու հայր» կամ «Եկեղեցու վարդապետ» տիտղոսով: Դրանք են.

1.—Գրիգոր Լուսավորիչ

2.—Ներսես Մեծ

3.—Սահակ Պարթև

4.—Մեսրոպ Մաշտոց

5.—Եղիշե վարդապետ

6.—Մովսես Խորենացի

7.—Դավիթ Անհաղթ

8.—Հովհանն Օձնեցի

9.—Գրիգոր Նարեկացի

10.—Ներսես Շնորհալի

11.—Հովհանն Որոտնեցի

12.—Գրիգոր Տաթևացի:

Վերջում ներկայացնելու ենք նաև մի շարք անձանց, որոնք միանգամայն արժանի են տոնելի արքերի ցանկում ընդգրկվելու: Այդպիսիներից են Ոգոմի Կույսը, Ստեփանոս Սյունեցին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Ծղթայակիր պատրիարքը և ուրիշներ:

Մեր նպատակը չէ բանասիրական ուսումնասիրություն կատարել, այլ պարզապես հայ հավատացյալ ժողովրդի համար ընթերցանության մի փոքրիկ շարադրանք ստեղծել՝ հիմնականում օգտագործելով վարքաբանական գրականությունը:

Հայաստանի առաջին լուսավորիչները՝

ա. Թ ա դ ե ո ս և ս. Բ ա ր թ ղ ի մ ե ո ս
առաքյալներ

Քրիստոս համբարձումից առաջ պատվիրեց իր առաքյալներին և աշակերտներին գնալ և քարոզել աստվածային Նոր վարդապետությունը ամբողջ աշխարհում և բոլորին քրիստոնյա դարձնել՝ մկրտելով «Յանուն Հոր և Որդույ և Հոգույն Սրբոյ»:

Առաքյալները կոչումի խորը գիտակցությամբ ներշնչված և աստվածային շնորհներով օծված ցովեցին աշխարհով մեկ՝ տարածելու համար Մեծ վարդապետի Ավետարանը:

Քրիստոսի 12 առաքյալներից երկուսը՝ ա. Թադեոսը և ս. Բարթողիմեոսը, իրենց քարոզությամբ քրիստոնեությունը տարածեցին նաև Հայաստան աշխարհում, ուր և նահատակվեցին Սանատրուկ թագավորի հրամանով:

Ըստ ազգային ավանդության, Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան բերեց ս. գե-

ղարդը, իսկ Բարթողիմեոս առաքյալը՝ Տիրամոր պատկերը, որը գետնեց Անձևացաց գավառի Դարբնաց-Քար կոչված վայրում՝ ավերելով Անահիտի մեհյանը և հիմնելով Հոգյաց վանք կուսաստանը:

Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների այս քարոզությունների և նահատակությունների համար էլ հայ եկեղեցին համարվում է



Նկ. 1. Ս. Թադեոս առաքյալ



Նկ. 2. Ս. Բարթողիմեոս առաքյալ

առաքելական և անվանվում Հայաստան-
յայց առաքելական սուրբ եկեղեցի:

Ս. Թադևոսի և ս. Բարթողիմեոսի գերեզ-
մանների վրա հետագայում կառուցվել են
եկեղեցիներ և հիմնվել վանքեր. ս. Թադեո-
սին՝ Արտազուն, իսկ ս. Բարթողիմեոսին՝
Ադրակուն:

Հայ եկեղեցին իր տոնելի սրբերի կարգն
է դասել մեր եկեղեցու առաջին լուսավորիչ-
ներին ու հիմնադիրներին և տարին մի քա-
նի անգամ նշում է նրանց հիշատակը մեծ
հանդիսավորությամբ:

Հատված շարականից

Հայրատունկ այգույն հրեղէն պարիսպ
և բարձր աշտարակ.

Ոսկեղէն բաժակք և ծիր մատռուակ.

Հայաստանեայց հայր հոգևոր Բարդուղիմէոս
և Թադէոս

Բարեխօս լերուք առ տէր վասն անձանց
մերոց:

Արգար թագավոր

Քրիստոնեության տարածման ավանդա-
կան գրույցներում Արգար թագավորը հա-
մարվում է ժամանակակից Քրիստոսին:

Ըստ ասորի պատմիչ Լաբուրնիա Եղեսա-
ցու և Եվսեբիոս Կեսարացու գրությունների,
Եղեսիայի Ագար թագավորը պատգամա-
վորներ է ուղարկում Ասորիքի հոռմեացի
բղեշխի մոտ, որը այդ ժամանակ գտնվում էր
Եկթերուպոլիս քաղաքում: Վերադարձին
պատգամավորները լինում են Երուսաղեմում
և տեսնում Քրիստոսի Երուսաղեմ մուտքը
և նրա կատարած հրաշագործությունները:
Վերադառնալով Եղեսիա, իրենց տեսածը
պատմում են Արգար թագավորին: Վերջինս,
որ մաշկային հիվանդություն ուներ, չկարո-
ղանալով Երուսաղեմ գնալ, նամակով մի
պատվիրակ է ուղարկում Քրիստոսի մոտ,
որպեսզի գա, բժշկի իրեն և ապրի իր պա-
լատում խաղաղության մեջ, հեռու հրեանե-
րի հալածանքներից:

Հիտու Եղեսիա չի գնացել, այլ միայն
խոստացել է իր աշակերտներից մեկին ու-
ղարկել այնտեղ՝ բժշկելու Արգարին և տա-
րածելու Ավետարանի լույսը: Հիտու Ար-
գարին է ուղարկել նաև իր դաստառակերտ,
անձեռագործ պատկերը:

Հետագայում Թադեոս առաքյալը եկել է
Եղեսիա և բժշկել Արգարին:

Եվսեբիոս Կեսարացու և հայ պատմիչ
Մովսես Խորենացու գրություններում դրված
են Քրիստոսի պատասխան նամակի պատ-
ճենները:

Արգարի մասին վերոհիշյալ պատմությու-

նը նույնությամբ կա նաև Մովսես Խորենա-
ցու պատմության մեջ, միայն թե այստեղ
Արգարը ներկայանում է իբրև հայ թագա-
վոր, իսկ Երուսաղեմում եղած պատգամա-
վորները՝ հայ նախարարներ:

Խորենացու պատմության մեջ դրված են
նաև թղթակցություններ, որ գրվել են Քրիս-
տոսի մասին Արգար թագավորի և Հռոմի
Տիբերիոս կայսեր, Ասորեստանի Ներսես և
Պարսից Արտաշես թագավորների միջև:

Ս. Արգար թագավորի տոնը սկզբնական
շրջանում կցվել է Ադդե հայրապետի տոնին,
մինչև Ադդե հայրապետի տոնը ավելի հին
է: Դեռևս կիլիկյան շրջանում գրված տոնա-
ցույցներում Ադդեի տոնին միայն հիշվում էր
«ընթեռնուն յեկեղեցուց զթուղթն Արգարու
և զգիրս նորին»: Այս հիշատակությանը հե-
տևվելով վերջին դարերի տոնացույցներում
հիշվել է մի տոն. «Ադդեի եպիսկոպոսի և
Արգարու թագավորի»: Իսկ այժմյան մեր տո-
նացույցում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը
առանձին տոն է հաստատել «Նախավկայ և
անդրանիկ թագավորին մերոյ սրբոյն Ար-
գարու»:

Հատված շարականից

Ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց
և մարգարէից.

Ծինեցեր զքո սուրբ զեկեղեցի.

Եւ ի սմա միաձայնեալ եղեն մարդիկ ընդ
հրեշտակս.

Փառաւորելով սուրբ զԵրրորդութիւնդ:

Ադդե հայրապետ

Թադեոս առաքյալի ձեռքով եպիսկոպոս
է ձեռնադրվել Եղեսիայի վրա: Անգթաբար
նահատակվել է Անանուն հեթանոս թագա-
վորի հրամանով, 86 թ., ըստ ավանդության:
Եղեսիացի ասորի, որ կերպասագործ էր և
Արգար թագավորի խույրարարը Ա դարի
առաջին կեսին:

Նրա վարքագրությունը մեր մատենագրու-
թյան մեջ է անցել Ե դարում հայերենի
թարգմանված ասորի մատենագիր Լաբուր-
նիայից:

Վկայաբանությունը. — Յայմատուրք, Կ.
Պոլիս, 1834 թ., Բ. 304—305:

Երանելի Ադդեն մետաքսագործ էր Ար-
գար թագավորի արքունիքում: Արգարը
նրան նամակով ուղարկեց Քրիստոսի մոտ՝
աղաչելով նրան գալ իր մոտ և բժշկել իրեն:
Ադդեն, գնալով Երուսաղեմ, երկրպագեց
Քրիստոսին, հանձնեց Նրան Արգարի նա-
մակը և ակամատես եղավ աստվածագործ
սքանչելիքների: Քրիստոս խոստացավ իր
համբարձումից հետո առաքյալներից մեկին
ուղարկել Արգարի մոտ՝ լուսավորելու նրան

և նրա քաղաքը: Ադդեն վերցնելով պատասխան մամակը, Քրիստոսի անձեռագործ պատկերի հետ, բերեց Աբգար թագավորին:

Քրիստոսի համբարձումից հետո **ս. Թադեոս** առաքյալը Նդեսիա գալով բժշկեց ու լուսավորեց թագավորին և բոլորին: Եվ երբ պատրաստվեց Արևելք գնալու, Ադդենի եպիսկոպոս ձեռնադրեց և իր հաջորդը նշանակեց, որը միշտ արթնությամբ հովվում էր իրեն հանձնված հոտը:

Աբգարի մահից հետո թագավորեց նրա որդիներից մեկը՝ չոր և անորեն մի մարդ, որ ասում էր խաղաղությունը և չէր ընդունում Ավետարանի քարոզած վարդապետությունը:

Նոր թագավորը հրամայում է Ադդենին. «Ինձ համար մի ոսկեղեն խույր պատրաստիր, ինչպես որ անում էիր իմ հայրերի համար»: Ադդեն պատասխանում է. «Ես չեմ թողնի իմ սրբազան գործը, որ ինձ ավանդեց Քրիստոսի աշակերտ Թադեոսը, որպեսզի քեզ համար, քո անորեն և հեթանոս գլխի համար խույր գործես»: Լսելով այս պատասխանը, զազազած թագավորը դահլիճի ոռարկում է սպանելու Ադդենին, որը եկեղեցում նստած քարոզում էր հավատացյալներին:

Դահլիճը գալով, սրով խփում է Ադդե հայրապետի ոտքերին, որը և նահատակվում է արյունահոսությունից:

Նրա աշակերտները՝ Փղոտը և Արշղաման, ամփոփում են նրա մարմինը նահատակված վայրում, իր կտակի համաձայն:

Հասոված շարականից

Հայրապետ սուրբ և անբիծ ընտրեալ
որովայնէ.

Սքանչեղագործ վկայ և պարծանք ազգի
մարդկան

Առ քրիստոս բարեխօսեա վասն մեր քո
սունողացս:

Հովիւ հոգևոր բանաւոր հօտի, լուսաւորիչ
տիեզերաց.

Սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցոյ.

Առ քրիստոս բարեխօսեա վասն մեր քո
սունողացս:

Ս Ա Ն Դ Ո Ւ Ջ Ա Ն Կ Ո Ւ Ջ Ա

Սանդուխտ կույսը եղել է Սանատրուկ թագավորի դուստրը: Աշակերտելով Թադեոս առաքյալին, իր հորից գաղտնի ընդունել է քրիստոնեությունը:

Սանատրուկը նախ փորձում է դարձի բերել Սանդուխտին և ապա, հուսահատվելով, զայրանում է և մամապատծի ենթարկում իր դստերը:

Սանդուխտը սրի հարվածով վիրավորվելով կրծքից, կնքում է իր մահկանացուն, լինելով Հայաստանի առաջին վկայունին: Նրա մարմինը գաղտնաբար թաղում է Թադեոս առաքյալը մի գաղտնի տեղ: Կույսի, ինչպես նաև Թադեոս առաքյալի գերեզմանները երկար տարիներ անհայտ են մնում և ապա Դ դարի վերջերին հայտնվում տեսիլքի միջոցով Կիրակոս անունով մի սուրբ ճգնավորի կողմից:

Կույսի գերեզմանը մինչև վերջերս էլ ցույց էր տրվում Նարեկի վանքում, որի բուն անունն էլ **ս. Սանդուխտի վանք** է, թեև սովորաբար **ս. Գրիգոր Նարեկացու** անունով է կոչվում, որովհետև **ս. Սանդուխտ** կույսի գերեզմանի մոտ է գտնվում նաև **ս. Գրիգոր Նարեկացու շիրիմը**:

Սանդուխտ կույսի հիշատակը հայ եկեղեցին տոնում է ամեն տարի ամառվա շրջանին՝ Թադեոս առաքյալի հետ միասին:

Ըստ Մ. ա. Օրմանյանի «Ուրիշ եկեղեցիներ իբր նախավկայունի կհռչակեն Պողոսի աշակերտ **ս. Թեկո** Լիկայունացին, որ բուն մարտիրոս **ալ չէ**, այլ խոստովանող միայն, բանի որ տանջանքներն անվնաս ազատելով՝ լրացյալ տարիքի մեջ խաղաղությամբ վախճանած է: Ըստ այսմ նախավկայունի լինելու փառքը կրճանք ավելի իրավամբ մեր Սանդուխտին սեփականել»:

Վկայաբանությունը.— Յաւմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ. 292—293:

Թադեոս առաքյալը, Նդեսիայի Աբգար թագավորին բժշկելուց հետո, գալիս է Հայաստան և քարոզում Արտազ գավառի Ծավարշան թագավորանիստ քաղաքում: Լսելով նրա քարոզչությունը, շատերը հավատում են Քրիստոսին, որոնց թվում և Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը:

Սանդուխտը փոքրահասակ և գեղեցկատես մի աղջիկ էր: Առաքյալը մկրտում է նրան, և նույն պահին շլացուցիչ լույսով է պարուրվում կույսը: Նրա հայրը, լսելով այս, բարկանում է և քանտարկում իր դստերը, այլ հավատացյալների հետ: Իսկ առաքյալը գիշերով գալիս է նրանց մոտ, բացելով բանտի դռները ներս մտնում և քաջալերում կույսին: Եվ երբ հավատացյալները աղոթում են, ժեժ շարժում է լինում, և քանդվում են նրանց կապանքները: Բանտապահները, տեսնելով այս, հավատում են Քրիստոսին և ընկնելով առաքյալի ոտքերը, մկրտվում նույն գիշերը՝ 33 հոգով:

Առավոտյան թագավորը մի իշխան է ուղարկում Սանդուխտին իր մոտ բերելու: Իշխանը, գալով բանտ, լսում է կատարված հրաշքի մասին և ինքն էլ քրիստոնյա դառնում:

Թագավորը, գրգռվելով սատանայից, հրամայում է սպանել իշխանին և բանտարկյալներին: Գիշերը երկնքից լույս է իջնում սուրբ վկաների ճշխարհներին:

Այն ժամանակ սուրբ Սանդուխտն իր հավատարիմ ծառաներից ոմանց գաղտնի ուղարկում է իր բնակարանը և, մաքուր կերպարով և իր բնակարանը, ծածկում վկաների մարմինները և ապա իր սպասավորների ձեռքով ամփոփում նրանց:

Մի օր առաքյալը, աղոթքի պահին, ս. Հոգու թեղադրանքով իմանում է, որ Սանդուխտը նահատակվելու է, և ասում է նրան. «Ուրախացիր դուստր, որովհետև շուտով Տերը լուսեղեն պսակ է դնելու քո գլխին»:

Առավոտյան կույսին տանում են թագավորի մոտ, որը, դիմելով Սանդուխտին, ասում է. «Ուրախա՛ր ինձ և սիրեցիր այդ օտար մոլորեցուցիչ»:

Արդ եթե դարձի չգաս, չարաչար կմեռնես»: Սանդուխտը պատասխանում է. «Նա ինձ չի մոլորեցրել, այլ լուսավորել է իմ հոգին»: Թագավորը բարկանալով հրամայում է կապել կույսին և մորթագերծ անել: Կույսը աղաղակում է և ասում. «Օգնիր ինձ, Քրիստոս»: Երկնքից լույս փայլատակելով, մեծ շարժում է լինում: Քանդվում են կույսի կապանքները, իսկ թագավորը և ողջ բազմությունը վախից հիմարանում են:

Սուրբը շտապելով հասնում է փոքր ձորակը, ուր պահում էին սուրբ առաքյալին, և ընկնելով նրա ոտքը, ասում է. «Այսօր Քրիստոս ինձ օգնության եկավ»: Այն ժամանակ թագավորը մի իշխան է ուղարկում առաքյալի մոտ և ասում. «Մեզ համար ներողություն խնդրիր քո Աստծուց, որովհետև կորչում ենք երկրաշարժից»: Առաքյալը աղոթում է և նույն վայրկյանին երկրաշարժը դադարում է, որը տեսնելով պատգամավորը՝ սքանչանալով հավատում է և մկրտվում:

Սրան սպանում է թագավորը՝ երկրաշարժի դադարելը կուրքերի գործ համարելով, իսկ Սանդուխտը գիշերով ամփոփում է սպանվածին և մխիթարում հավատացյալներին:

Այն ժամանակ Զարմանդուխտ անունով թագավորազն մի կին քրիստոնյա է դառնում՝ մկրտվելով առաքյալից: Թագավորը նրան ևս նահատակել է տալիս, որի մարմնի վրա լույս է իջնում, և շատերը հավատում են:

Իսկ թագավորը մոռալով ասում է. «Բոլորին Սանդուխտն է հրապուրում»: Եվ հրամայում է սպանել նրան:

Իսկ Սանդուխտը առավոտյան առաքյալին մի տեսիլ է պատմում. «Մի այր ինձ լույս հագցրեց և սքանչելի պսակ դրեց իմ գլխին»: Առաքյալը պատասխանում է. «Այսօր Քրիստոսի մոտ կփոխակերպվես»: Եվ

մինչ նրանք խոսում էին, գալիս են դահիճները, կապում կույսին և տանում սպանման վայրը:

Ս. Կույսը նահատակվելուց առաջ աղաղակում է. «Տեր Հիսուս, ընդունիր ինձ»: Եվ մի սուր մխրճվում է նրա կուրծքը: Կույսը ավանդում է իր հոգին:

Ապա հրե սյան նման մի լույս է իջնում նրա մարմնի վրա, որը տեսնելով շուրջ 2000 հոգի հավատում են Քրիստոսին: Իսկ առաքյալը գիշերով գալով մկրտում է նրանց և առնելով սուրբ կույսի մարմինը ամփոփում է մի անհայտ հանգստարանում, որպեսզի անօրենքների կողմից չանպատվի և իր ժամանակին Տիրոջ կողմից հայտնվի հավատացյալներին:

Սուրբ Սանդուխտը նահատակվեց քաղոց ամսի 7-ին (դեկտեմբերի 15-ին), Աստուծո փառքի համար:

Նշխարների գյուտը.— Յայնմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա. 69—70:

Թաղեսու առաքյալի և Սանդուխտ կույսի վկայական մահերից հետո նրանց հանգրստարանները անհայտ մնացին երկար տարիներ և միայն Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների ժամանակ հայտնվեցին սուրբ կրոնավոր Կիրակոսի տեսիլքով, մի ճգնավոր, որ, հրաժարվելով աշխարհից, խստաբեր վարքով ճգնում էր Արտագ վանքի լեռներից մեկում, սուրբ Թաղեսուի և սուրբ Սանդուխտի նահատակության վայրերին մոտիկ:

Սա իր տեսիլքների և ճշխարների գյուտի մասին պատմում է հետևյալը. «Ես Կիրակոս անարժանս մի լույս տեսա և լույսի մեջ ոսկե մի աթոռ, որի վրա նստած էր Թաղեսու առաքյալը և հինգ մարդիկ նրա շուրջը և մի լուսազգեստ աղջիկ բլրին կանգնած: Եվ մի սքանչելի մարդ տեսա, որ ասում էր ինձ. մի վախեցիր. որովհետև Աստված քեզ ցույց տվեց իր սուրբերին: Եվ սթափվելով երկյուղից, փառք տվեցի Աստծուն և խնդրեցի ճշմարտությունը:

Երկրորդ օրը դարձյալ տեսա առաքյալին նույն կերպարանքով և գետին ընկա: Նա բարձրացրեց ինձ և ասաց. «Արի՛, Կիրակոս, և ես քեզ ցույց կտամ իմ ճշխարհները, և ինձ մի անտաշ արձան ցույց տվեց արևմտյան կողմից և մի փոքրիկ եկեղեցի արևելքից և ասաց. «Այստեղ կգտնես»: Ես փորեցի ցույց տրված վայրը և ոչինչ չգտնելով՝ տրտմությունից նիրհեցի: Երեսաց ինձ սուրբը և ասաց. «Այլ կողմը փորիր և կգտնես»: Արթնանալով փորեցի և ճշխարներ գտա, որտեղից անուշ հոտ բուրեց և ես կարծեցի թե առաքյալն է:

Նույն գիշեր ինձ մի բարձրահասակ պատանի երևաց և ասաց, թե այդ նշխարները իրն են և թե առաքյալի նշխարները իմ առջև կանգնած արձանի մեջ են:

Եվ դարձյալ երևաց ինձ առաքյալը և ասաց. «Այսօր կգտնես թո ցանկացած», և տարավ ինձ հոյց տվեց տեղը: Եվ արթնանալով ինձ հետ վերցրեցի Սամվել անունով մի քահանայի և գնացի նշանակված վայրը: Եվ մինչ աղոթում էինք, թնդյուն եղավ և բացվեց վեմը և բուրեց անուշ հոտ, և գտանք առաքյալին քարանձավի մեջ արեվելյան կողմից և առաքյալի մոտ՝ այլ սրբերի նշխարներ:

Եվ երրորդ օրը եկանք սուրբ Սանդուխտի հանգստարանը և մինչ աղոթում էինք, բլրի մեջ լույս տեսանք և լույսի մեջ լուսագգեստ մարդկանց մի բազմություն: Հանգստարանը բացվեց և անուշ հոտ բուրեց, և երևացին նշխարները, որոնք առնելով բերեցինք և դրեցինք առաքյալի մոտ»:

Եվ գիշերը լույս եղավ նշխարների վրա, և համբավը տարածվեց ամբողջ աշխարհում: Եվ հավատացյալները գալիս էին ցնծությամբ և բուժում իրենց բազմաթիվ հիվանդությունները:

Հատված շարականից

Քե պարծի այսօր սուրբ եկեղեցի.

Ով վկայուհի սուրբ Սանդուխտ.

Որ զհայրականն թո թողեր զպաշտօն.

Վասն Քրիստոսի հեղեր զարիւն թո սուրբ:

Որ զտիկնութեանն թո թողեր զփառս.

Եւ աստուածային փառօքն զարդարեցար.

Այսօր դասակցեալ ընդ զարթունա երկնից.

Վասն մեր առ տէր բարեխօսեա:

Ոսկյան քահանաներ

Հայաստան եկած 5 հոռմեացի դեսպաններ էին՝ Խոյուտսի գլխավորությամբ, որի անունը հայերեն թարգմանվում է ոսկի:

Հանդիպելով Թադեոս առաքյալին, քրիստոնյա են դառնում և քրիստոնեությունը քարոզում Հայոց արքունիքում և ապա հալածվելով Սաթենիկ թագուհու և Վնույն ու Վրդույն արքայազների կողմից, բաշխվում են Ծաղկանց լեռները ու ճգնողական կյանքով ապրում, ուր և նահատակվում են արքայազների ձեռքով:

Նրանց աշակերտներն են Սուքիասյան քահանաները:

Պատմությունը սուրբ Ոսկիի չորս ընկերների անունները չի հիշում, սակայն նրանց վկայարանությունը ճշմարտության մոտ է այնքանով, որ հաշվելով ընդ Լուսա-

վորչի օրերից սկսած տոնել է նրանց հիշատակը հոռի ամսվա 10-ին, որը համապատասխանում է սեպտեմբերի 19-ին:

Վկայարանությունը.— Ցայսմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 154—155:

Սրանք Թադեոսի աշակերտներն էին: Իրենց գլխավորի անունը Խոուսի էր, որ թարգմանվում է ոսկի: Առաքյալի մահից հետո կրոնավորվեցին Եփրատի ակունքներում՝ Ծաղկանց լեռան ծնակում:

Իսկ երբ թագավորեց Արտաշեսը, եկան նրա մոտ և քարոզեցին Քրիստոսի հավատը: Եվ քանի որ թագավորը զբաղված էր պատերազմով, կարևորություն չտվեց նրանց: Իսկ թագավորի կնոջ մոտ եկած պալմ իշխանները հավատացին նրանց և մկրտվեցին նրանցից: Թագավորի որդին, լսելով այդ, հալածեց սրբերին, որոնք և գնացին իրենց նախկին մեհարանները:

Իսկ մկրտված պատվավոր մարդիկ, հետազոտելով նրանց բնակության վայրը, եկան և մնացին նրանց մոտ և օրեցօր ավելի էին ամրանում Քրիստոսի հավատքի մեջ: Բայց քանի որ դրանք փառավոր մարդիկ էին և հզորներ՝ պատերազմի գործի մեջ, թագավորի որդին կանչեց սուրբ Ոսկիին և նրա ընկերներին ու խնդրեց նրանց համոզել իշխաններին Քրիստոսի երկրպագությունից դառնալ՝ իրենց պատվի և գործի համար: Սակայն Ոսկյանք ավելի քաջալերեցին նրանց մնալու իրենց նոր հավատքի մեջ և գաղտնի գնացին իրենց տեղերը:

Իսկ թագավորի որդին զորք ուղարկեց և նահատակեց նրանց սեպտեմբերի 19-ին:

Հետագայում նահատակվեցին նաև մի լեռան վրա ապաստանած Սուքիասյանները՝ Ոսկյանց աշակերտները:

Ս. Գրիգոր Լուսավորիչը եկավ նրանց լեռները և մի-մի տաճար շինեց ու վանք հիմնեց նրանց նահատակությունների վայրում:

Լեռների անուններն էլ կոչվեցին Ոսկի և Սուքիաս նահատակների անուններով:

Հատված շարականից

Որք արժանաորեցայք կոչիլ

չաշակերտութիւն առաքելոյն Թադեոսի

Եւ աստուածային հրով մաքրութեան ոսկի

փորձեալ զտալք ի բնակարանս հրեշտակաց.

Ով երանելի սուրբ Ոսկեանք.

Բարեխօսեցէք առ տէր մաքրել զմեզ ի

մեղաց մերոց:

Սուքիասյան քահանաներ

Այլան ազնվականներ էին, 19 հոգի, որոնք հայոց արքունիքն էին եկել Սաթենիկ թագուհու մոտ՝ Սուքիասի գլխավորությամբ:

Արքունիքում հանդիպելով Ոսկյան քահանաներին, քրիստոնյա են դարձել և քաշվելով Բագրևանդի լեռներից մեկը, որը հետագայում Սուրբասի անունով կոչվել է Սուկավերտ, ճգնողական կյանքով ապրել են 44 տարի:

Նահատակվել են նույն լեռան վրա՝ իրենց ճգնողական կյանքից չհրաժարվելու համար, Այանների թագավորի հրամանով:

Նրանց նահատակության օրը նշանակվել է նավասարդի 17-ը (օգոստոսի 27-ը), առանց տարին հիշելու, այդ օրն էլ նշանակվել է տոնը նախնական տոնացույցի մեջ:

Վկայաբանությունը.— Յալամատրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 100—101:

Հայոց Արտաշես թագավորի ժամանակ Սարթենիկ թագուհու մոտ եկած ալան իշխանները պալատում հանդիպեցին Ոսկյանց, լեցին նրանց քարոզությունը և հավատացին Քրիստոսին ու մկրտվելով հեռացան արքունիքից և բնակվեցին Բագրևանդ գյուղի դիմաց գտնվող Սուկավերտ լեռան վրա:

Եվ նրանց անուններն էին Սուրբաս, Դուկիանոս, Պողեթոս, Կողբատոս, Իդիոքսիքերոն, Մեմաս, Փոկաս, Սարգիս, Դեմետիոս, Հովիմոս, Բիկտոր, Թալելոս, Հորդանես, Անաստաթեոս, Թեոքնիտոն, Հակոբ, Թեոդորոս և ուրիշներ:

Սրանք խոտանարակ բնակվեցին Սուկավերտ լեռան վրա 44 տարի, մինչև ալանների Գորգիանոս թագավորի ժամանակ, որը Բաղյահ անունով մեկին ուղարկեց զորքով նրանց պատվով բերելու և եթե չգան՝ սրով սպանելու: Որը գալով գտնում է նրանց և համոզում, որ վերադառնան: Եվ երբ տեսնում է, որ անասան են իրենց հավատքի մեջ, հրամայում է ցցահան անել և ապա աչրել մարմինները:

Սակայն երբ Կողբատոսը ծիծաղում է զորավարի անմտության վրա, վերջինս զայրանում է և հրամայում գլխատել բոլորին, նավասարդի 17-ին (օգոստոսի 27-ին): Եվ այնտեղից աղբյուր է բխում ամեն տեսակի հիվանդությունների բժշկության համար:

Եվ սուրբերից երկու կրտսերներ, որոնք վախից թաքնվել էին, եկան ամիոփելու նահատակների մարմինները, սակայն, չգտան, որովհետև Աստված անհետացրել էր նրանց: Իսկ երկուսը մեծապես լշտանալով, որ իրենք էլ չարժանացան մարտիրոսության պատվին, ավելի սաստկացրին իրենց տառապանքից կյանքը, մինչև որ մահացան և թաղվեցին նույն վայրում:

Հատված շարականից

Ահա տեսաք զՍուկավերտ լեռոն դիտակ և բնակարան վկայիցն,
Որոց առեալ զողորմութիւն յԱստուծոյ

Փրկէն իրեանց:
Որք բարձին զխաչս իրեանց խաչեցելոյն խաչակցեցան.

Դիմելով յօժարութեամբ առ սատակիչսն
որպէս զգառիմս ի մէջ գալոց:

Հ ռ ի փ ս ի մ յ ա ն ք, Մ ա ն ե և Ն ու ն ե
կ ո յ ս ե ռ

Հոփսիսմյանց կույսերի ծագման մասին բազմաթիվ կարծիքներ են եղել, սակայն մինչև օրս դեռ չի ճշտվել նրանց ծագման և ազգության պատկանելության վերաբերող հարցերը:

Ըստ ազգային ավանդության, նրանք հոռմեացի կույսեր էին, որ ապրում էին Հոռմի ս. Պողոս կուսաստանում, Գայանե մայրապետի ղեկավարությամբ: Երբ 70 հոգի փախչում են Դիոկղետիանոսի հալածանքներից և, անցնելով Եփեսոսով ու Երուսաղեմով, գալիս են Հայաստան: Որոշ ժամանակ մնալով Անձնացյաց աշխարհի Հոգյաց վանքի կուսաստանում, անցնում են Վաղարշապատ և հաստատվում Հնձան կոչված վայրում:

Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, «Հավանականագույն և ընտրելագույն կկարծենք լսել, թե առաքելական ժամանակներե սկսած Հոգվոց վանքի հայազգի կույսերեն էին, որք հալածանաց ատեն բռնված, և իբրև նշանավոր անձեր մինչև թագավորիև առյալնը հանված են»:

Ստույգ է սակայն կույսերի նահատակության պատմությունը, որ տեղի է ունեցել Վաղարշապատում, Տրդատ թագավորի հրամանով 301 թ. ս. Գրիգոր Լուսավորչի վիրապից ելնելուց մի քանի օր առաջ: Այս մեզ է ավանդում Դ դարի պատմիչ Ագաթանգեղոսը:

Լուսավորչիչը կարողանում է հավաքել և ամիոփել կույսերի նշխարները և նրանց նահատակության վայրերում կառուցել երեք փայտաշեն վկայարաններ՝ ս. Հոփսիսմեի, ս. Գայանեի և մյուս կույսերի անուններով:

Հոփսիսմյանց կույսերից են համարվում նաև Նունե և Մանե կույսերը, որոնցից առաջինը քրիստոնեությունը քարոզում է Վրաստանում, ս. Գրիգոր Լուսավորչի հանձնարարությամբ, և համարվում է Վրաստանի առաջին առաքելուհին, իսկ երկրորդը ճգնում և խոստովանական մահով իր հոգին ավանդում է Աստծուն Եկեղյաց գավառի Սեպուն լեռան ծակներում:

615—618 թթ. Կոմիտաս կաթողիկոսը կերտում է ս. Հռիփսիմե սբանչեղի քարաշեն տաճարը, ինչպես նաև կույսերի մահատա-
նության մասին գրում «Անձինք նուիրեալք»
հայ շարականների մեջ բացատիկ տեղ գրա-
վող երգը:



Նկ. 3. Հայոց արքունիքի մկրտությունը

Քարաշեն տաճար է կառուցվում նաև ս. Գայանեի մահատանության վայրում 632 թ.-ին, եզր կաթողիկոսի ձեռնարկումով, ինչ-
պես նաև 18-րդ դարում կույսերի բնակու-
թյան վայրում՝ Հնձանում, ս. Ծողակաթ
անունով, Նահապետ Եղեասցի կաթողիկոսի
օրով:

Հայ եկեղեցին կույսերի հիշատակը տո-
նում է ս. Գրիգոր Լուսավորչի վիրապից ել-
քի նախընթաց երկուշաբթի և երեքշաբթի
օրերին, հունիս ամսին:

Իսկ Մանե և Նունե կույսերի հիշատակը
տոնվում է նաև առանձին տոնով, Հռիփ-
սիմյանց տոնից մեկ շաբաթ հետո:

Վկայությունները.—

ա.—Գայանե և Հռիփսիմե կույսերի հի-
շատակը և Վարագա ս. Խաչի տոնը: Յայս-
մաուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Ա 96—97:

Գայանե և Հռիփսիմե կույսերը Հայաս-
տան գալու ժամանակ իրենց հետ էին բերել
Քրիստոսի խաչափայտից մի մասնիկ, որը
Պատրոնիկե կայսրոսին իր հետ տարել էր
Հռոմ: Եվ քանի որ Հռիփսիմեն նրա թոռն
էր, այն նրա պարանոցին էին կապել՝ ի
պահպանություն կույսի:

Եվ երբ հասան Տոսպ գավառի Վարագ
լեռը, իրենց հետ եկող քահանաները և կույ-
սերից ոմանք մնացին այնտեղ՝ իրենց հետ
ունենալով սուրբ Խաչը:

Եվ այնտեղ ճգնեցին ու խոստովանական
մահով վախճանվեցին, իսկ սուրբ Խաչը աճ-
գիտելի մնաց մարդկանց, մի քարի վրա,
որովհետև սուրբ տիկիները մահատանվե-
ցին Վաղարշապատում: Եվ երկիրը կուս-
պաշտության էր հետևում, և ոչ ոք չգիտեր
թե որտե՞ղ է, բայց ոմանք լսել էին, թե Վա-
րագա լեռան վրա է:

Եվ շատ ժամանակ հետո, Ներսես Ծինո-
ւյի հայրապետության և Վարդ պատրիկի
օրով, մինչ Թոթիկ միայնակյացը և Հովել
աշակերտը աղոթում էին, Վարագա լեռը
լցվեց լույսով և հրեշտակների՝ Աստծուն
փառաբանող ձայներով: Եվ սուրբ Խաչը
քարից վերացավ և լույսի հետ գալով նստեց
եկեղեցու սուրբ Սեդակին՝ եկեղեցին յոճե-
լով լույսով և անուշահոտությամբ ու մինչև
երեկո մնալով՝ անհայտացավ:

Եվ հայոց Ներսես կաթողիկոսը, Վարդ
պատրիկը և ուրիշներ հավաքվելով, ամեն
տարի սուրբ Խաչի տոն կարգեցին մեհենի
20-ին (փետրվարի 26-ին), Քրիստոսի
փառքի համար:

բ.—Սուրբ Գայանեի և իր երկու ընկերնե-
րի վկայաբանությունը: Յայսմաուրք, Կ. Պո-
լիս, 1834 թ., Բ 179:

Ս. Հռիփսիմեի մահատանությունից հետո
թագավորը հրամայեց դահնապետին ապա-
նել սուրբ Գայանեին: Եվ նրան, երկու այլ
ընկերների հետ, հանեցին քաղաքից դուրս,
պատռեցին զգեստները ու չարաչար տան-
ջանքների ենթարկելով, մահատանեցին
հոռի 27-ին (հոկտեմբերի 6-ին):

Նահատակությունից վեց օր հետո Աստու-
ծո բարկությունից հարվածվելով թագավո-
րը խոզի կերպարանք առացավ, և նրա ողջ
գործը չարաչար ապահարվեց: Այն ժամա-
նակ մի քանի անգամ թագավորի քույր Խոս-
րովադուխտը տեսիլք ունեցավ՝ մարդ ողար-
կելու Արտաշատ և խոր վիրապից հանելու
սուրբ Գրիգորին, որ բժշկի նրանց հիվան-
դությունները:

Եվ երբ եկավ սուրբ Գրիգորը, ինն օր

սրբերի մարմինները անթաղ էին մնացել: Իսկ նա, հավաքելով, ամփոփեց նրանց մարմինները և երեք տաճարներ շինեց նրանց վկայությունների վայրերում:

գ.—Նունեի վկայաբանությունը: Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 212—213:

Սա սուրբ Հռիփսիմյանց ընկերներից էր, որը բաժանվելով նրանցից, գնաց Վրաստան և, մնալով Մցխեթում, Քրիստոսի անունով բազմաթիվ բժշկություններ արեց, որոնց թվում նաև բժշկեց Միհրան իշխանի կնոջը, Միհրանին փրկեց մատախտից և այլն: Տեսնելով այս ամենը, Միհրան իշխանը և նրա շրջապատը հավատացին Քրիստոսին և նրա վարդապետությանը:

Ապա սրբունի իշխանի կողմից պատգասավորներ ուղարկեց Գրիգորին, որպեսզի իրենց առաջնորդ ուղարկի: Իսկ նա դեռ եպիսկոպոս չէր եղել և այդ պատճառով հրամայեց կործանել կուռքերը և տեղը Տերունական Խաչը կանգնեցնել, մինչև որ նրանց Աստված հովիվ տա:

Եվ մարդիկ երկրպագելով Խաչին ու տեսնելով, որ հասարակ փայտից է և ոչ ճանաչարհայլ ոսկուց, արհամարհեցին հիմարությանը: Իսկ Աստված ամպի սյուն ծագեցրեց Խաչի վրա և սյան մեջ լույս, և սաղմոսերգության ձայնն էր Խաչի շուրջը և անուշահոտության բուրմունքը: Եվ, բոլորի սրտերում հաստատվելով ճշմարիտ հավատքը, երկրպագեցին սուրբ Խաչին:

Իսկ երանելի Նունեն գնաց և քարոզեց այլ գավառներում մինչև Ալանների դուռը և Կասպից ծովը և մագքությունների սահմանը և նույն քարոզության մեջ էլ իր հոգին ավանդեց Աստծուն:

դ.—Մանեի վկայաբանությունը: Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 212—213:

Սա սուրբ Հռիփսիմյանց ընկերներից էր: Այն ժամանակ, երբ սուրբ տիկնայք եկան Հայոց աշխարհ, նախ Եդեսիա հանդիպեցին և ապա եկան Եկեղյաց գավառ, ուր և մնաց Մանե կույսը՝ բնակվելու մի քարայրում:

Հետագայում ս. Գրիգոր Լուսավորիչը փնտրեց Մանե կույսին և գտավ Դարանաղյաց գավառում ճգնելիս: Կույսը, հեռվից տեսնելով Լուսավորչին, արգելեց նրան մտնել իր բնակատեղին՝ քարայր, պատճառաբանելով իր մերկությունը, խնդրելով գալ երեք օր հետո:

Երեք օր հետո գալով, սուրբ Գրիգորը գտավ նրան վախճանված և թաղեց նույն մենաստանում:

Հատված շարականից
Անձինք նուիրևայք սիրոյն Քրիստոսի.
Երկնաւոր նահատակք և կուսանք
իմաստունք.

Ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
Մայր սիրովն դստերօքն իւրովք:

Բարբառք երկնաւորք լցին գերկիր.
Քանզի հօտ անուշից բուրեցայք ի Քրիստոս.
Ողջակեզք բանաւորք և զոհք փրկութեան.
Եւ որոշք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Տ ր դ ա տ, Ա շ խ ե ն, Խ ո ս ր ո վ ա դ ու խ տ

Տրդատը Խոսրով Ա-ի որդին էր, Արշակունցի տոհմից: Մնվել, մեծացել և զինվորական կրթություն է ստացել Հոռոմում, ապա Դիոկղետիանոս կայսեր ջանքերով բազմել է Հայաստանի թագավորական գահին՝ 287 թ.-ին: Ամուսնացել է ալանների արքայադստեր՝ Աշխենի հետ:

Տրդատի անվան հետ է կապված քրիստոնեության պետականացումը Հայաստանում, 301 թ.-ին:



Նկ. 4. Ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը

Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին և Խոսրովադուլիս թագավորաբայրը մեծ չափով օգնել են ս. Գրիգոր Լուսավորչին Հայաստանում քրիստոնեությունը տարածելու և ամրապնդելու գործում: Նրանք երեքն էլ անձամբ մասնակցել են ս. Էջմիածնի Մայր տաճարի շինարարությանը:

Տրդատ թագավորն իր ծերության օրերին առանձնացել է Սեպուհ լեռը և Լուսավորչի միայնակի մեջ ճգնողական կյանք վարել

և ապա թունավորվելով մահացել 330 թ.-ին՝ հավանաբար զոհ գնալով հակաքրիստոնյա ոգով տոգորված նախարարների հեթանոսական վեթմանությունը:

Ա. Տրդատի մարմինը ամփոփվել է Թորդանում, Լուսավորչի հանգստարանում:

Խոստովանական կյանքով իրենց հոգիները Աստծուն են ավանդել նաև Աշխեն թագուհին և Խոսրովադուխտը՝ ճգնողական կյանքով ապրելուց հետո Գառնի ամրոցում:

Հայ եկեղեցին Տրդատ թագավորի, Աշխեն թագուհու և Խոսրովադուխտի հիշատակները նշում է միացյալ տոնով՝ «Արթուրցն Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխենի տիկնոջն և Խոսրովադիստոյն» անվանումով:

Վկայաբանությունը.— Յալսմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 261—262:

Տրդատ թագավորը հայոց Խոսրով արքայի որդին էր և իր հոր սպանությունից հետո պարսից արքայից փախստական տարվեց հոռմեացիների երկիրը: Իսկ իր քույր Խոսրովադուխտին պատսպարեց Օսու նախարարը՝ ամրանալով Անի ամրոցում, մինչև որ նորից եկավ Տրդատը՝ հույների արքայից թագավոր պսակված:

Տրդատը իրեն կին առավ ալանների արքայադուստր Աշխենին:

Եվ երբ սուրբ Հովհաննիսն իր ընկերներով նահատակվեց ու Տրդատը հիվանդացավ, հրեշտակը երևաց Խոսրովադուխտին և պատվիրեց սուրբ Գրիգորին դուրս հանել վիրապից, որպեսզի գա և բժշկի հայոց թագավորին: Երբ սուրբը եկավ, թագավորը, խոզի կերպարանքով, մարդկանց բազմությամբ նրան ընդառաջ գնաց:

Իսկ սուրբ Գրիգորը խնդրեց Աստծուն թագավորին ազատելու անասնական կերպարանքից, տալու իմաստություն և վարդապետությունը ճանաչելու կարողություն: Եվ թագավորը վաթսուն օր ու գիշեր հառաչանքով ու արտասուքով աշակերտեց Գրիգորին Քրիստոսի վարդապետությունը:

Եվ այս ամենից հետո սուրբ Գրիգորը տեսավ վկայականների շինության սքանչելի տեսիլքը: Թագավորը խնդրեց սրբին, որ միայն իր ձեռքերը և ոտքերը բժշկի, շինությունների գործի համար, և Գրիգորը աղոթելով բժշկեց: Իսկ նա, առնելով իր կնոջը և քրոջը, սկսեց պատրաստել կույների գերեզմանները. ինքը փորում էր բահով, և կանայք հողը կրում էին իրենց փեշերով:

Եվ երբ սուրբ Գրիգորը պատրաստեց վկաների հանգստարանները, թագավորը հրաման խնդրեց գնալ և մեծ քարեր բերել նրանց համար: Եվ երեք օրվա ճանապարհ գնալով դեպի Մասիս լեռը, ութ անտաշ քարեր բարձեց իր թիկունքին և քերեց, որոնցից մեկը շատ մարդիկ անկարող էին շար-

ժել, այդպիսով ցանկանալով հատուցել ս. Հովհաննիսին՝ իր ունեցած հողի տուփանքների համար:

Ապա սուրբ Գրիգորը աղոթեց խոզացած արքայի վրա, և նա, դողափար լինելով, շուտով ազատվեց խոզի մորթից և փափկամորթ դարձավ, որը տեսնելով ներկաները, փառք տվեցին Աստծուն:

Այս ամենից հետո սուրբ Գրիգորը գնաց Կեսարիա և քահանայական աստիճան ստանալով եկավ և մկրտեց թագավորին, ողջ աշխարհի հետ:

Եվ այնուհետև թագավորն իր կնոջը և քրոջը աշակերտության տվեց ս. Գրիգորին, իսկ ինքը աղոթքներով ու պահքով սկսեց գիշեր ու ցերեկ առանց ձանձրանալու մտածել հանդերձյալ կյանքի մասին: Նաև խրատում էր քույր նախարարներին և իշխաններին սիրել Աստծուն հավատքով և բարի գործերով:

Բայց խստամբակ և աշխարհաւեր իշխանները չէին լսում թագավորին, այլ հեթանոսական չար սովորություններով էին ապրում: Իսկ թագավորը, չկարողանալով ներել նրանց, թողեց արքայի պսակը և գնաց մի մենսարան, սուրբ Գրիգորի մոտ և երկար ժամանակ ճգնեց այնտեղ:

Իշխանները նորից կանչեցին նրան՝ խոստանալով նրա կամքի համաձայն գործել: Եվ նա, անկախ իր կամքից, նորից եկավ ու սկսեց վարել թագավորական գործերը:

Սակայն նենգամիտ, անօրեն ու զազանաբար իշխանները փոքր ժամանակ անց թուգավորեցին նրան և ապա թագավորական փառքով ամփոփեցին Թորդանում:

Նրա կինը և քույրը նույնպես նույն ճգնողական կյանքով ապրեցին և ապա իրենց հոգիները ավանդեցին Քրիստոսին:

Եվ սուրբ Տրդատը թագավորեց 56 տարի, Աստուծո կամքով:

Եվ սրանց հիշատակը տրեխ 21-ին է (նոյեմբերի 29-ին):

Հատված շարականից

Որ զօրութեամբ նշանի խաչի քո տէր
պատերազմելով՝
Խորտակեաց զընդդիմամարտ բռնութիւն
հեթանոսաց
Եւ հաստատեաց խաղաղութեամբ սուրբ
գեկեղեցի.
Քարեպաշտութեամբ սորա Քրիստոս
խնայեա ի մեզ:

Ա Ր Ի Ս Տ Ա Կ Ե Ս Ի Ա Յ Ր Ա Վ Ե Ս

Ա. Գրիգոր Լուսավորչի կրտսեր զավակն է, ծնված հավանաբար 265 թ.-ի շուրջ:

Մանկությունը անցկացրել է Կեսարիայում, մոր՝ Մարիամի կրոնական շնչի ներքո: Ապա մտել է վանք և ապրել առանձնական կյանքով:

Դեռ Լուսավորչի կենդանության օրով Հայոց հայրապետը և Տրդատ թագավորը առաջարկել են նրան բազմել հայրապետական գահին և հովվել հայ ժողովուրդը: Նա թեև չէր ցանկանում հրաժարվել իր ճգնդական կյանքից, սակայն հասկացել էր, որ Աստուծո մշակության գործը ավելի կարևոր է, քան մենավոր կյանքը անապատի մեջ, և որ գոհաբերությունը ոչ թե միայն անձնական փրկության համար պետք է լինի, այլ նաև շատերի հոգևոր կյանքի համար:

Ստանձնելով հայրապետական գործերը, 325 թ. մասնակցել է Նիկիայի Ա տիեզերական ժողովին: Պատմվում է, թե Բյուզանդիայում մի խումբ արիտականներ, տեսնելով հայոց Հայրապետի նիհար, տկարամարմին կերպարանքը, ասել են, թե Արևելքի եկեղեցու ներկայացուցիչը ոչ թե հայրապետի, այլ մշակի տեսք ունի, և ծաղրելով առաջարկել են Արիստակեսին առնել արորը և եզներով ծովը հերկել: Հայրապետը առնում է արորը և եզներով քայլում է ծովի վրայով ու հերկում այն՝ իրեն ծաղրողների ապշահար ու ամոթահար հայացքների առաջ:

Արիստակեսի հայրապետության տարիներին մահանում է Տրդատ թագավորը: Նախարարների անիշխանական ձգտումների հետևանքով երկրում խառնակ մի դրություն է ստեղծվում: Երկրի խառնակ այդ կացությունը փրկվում է հայոց հայրապետի հեղինակավոր միջնորդությամբ Կոստանդինոս կայսեր մոտ, որով Տրդատի որդի Խոսրով Բ Կոստանդ ժառանգում է հայոց թագավորական գահը:

Արիստակես հայրապետն իր հովվապետության շրջանին (325—333 թթ.) արթուն կերպով հետևում էր Հայաստանում քրիստոնեության տարածմանը և ամրապնդմանը՝ անվերապահորեն խարազանելով ժողովրդի կենցաղում տեղ գտած հակաքրիստոնեական բարքերը:

Իր խստաբարո նկարագրի, հայ եկեղեցու և քրիստոնեության սկզբունքներին հավատարիմ և նախանձախնդիր արժանիքների համար Արիստակես հայրապետը իրավամբ կոչվել է «հոգևոր սուսեր»:

Նրա մահվան մասին Մովսես Խորենացին հաղորդում է հետևյալը. «Որովհետև նա իսկապես հոգևոր սուր էր, ինչպես ասված է. ուստի նա թշնամի էր թվում բոլոր անիրավ և աղտեղագործ մարդկանց: Ուստի Արքեպիսկոպոս, որ Չորրորդ Հայքի վերակացու էր նշանակված, նրանից հանդիմանվելով, հարմար օրվան էր սպասում և Ծովհա

գավառում նրան ճանապարհին պատահելով, սրով սպանեց, իսկ ինքը փախավ գնաց Կիլիկիայի Տավրոս լեռը»:

Նախատակ հայրապետը թաղվել է իր հայրական կալվածքում՝ Թիլ ավանում:

Հայ եկեղեցին նրա հիշատակը տոնում է Վարդավառի երրորդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը, Լուսավորչի որդիների և թոռների տոնին. «Սրբոց որդոց և թոռանց սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոյ Արիստակեսի, Վրդանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիելի»:

Վկայաբանությունը.— Յայտնաբեր, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 266—267:

Ս. Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին փոքր հասակից մտավ վանք և կրոնավոր դարձավ Կեսարիայում:

Երբ ս. Գրիգորը լուսավորեց Հայաստանը, Տրդատ թագավորը լսեց Գրիգորի որդիների մասին և երեք իշխան ուղարկեց Կեսարիա՝ նրանց պատվով իր մոտ բերելու: Նրանք գտան ավագ որդուն՝ Վրթանեսին, քաղաքում, քահանայական աստիճանով, որը նախկինում աշխարհական կարգ էր ընդունել և ամուսնացել: Ապա գտան Արիստակեսին և աղաչեցին, որ դուրս գա վանքից, և չկարողացան համոզել: Եվ հավաքելով եպիսկոպոսներին ու քահանաներին, բռնի ուժով հանեցին նրան՝ Աստուծո մշակության գործին ծառայեցնելու համար:

Եվ քանի որ ս. Գրիգորը սկսել էր ճգնդական կյանքով ապրել, թագավորը աղաչեց նրան, որ Արիստակեսին իր փոխարեն ձեռնադրի և բազմեցնի քահանայապետական Աթոռին: Եվ սուրբ Գրիգորը բարեհաճեց իջնել լեռից և, եպիսկոպոսների ժողով գումարելով, իր որդուն իրեն հաջորդ նշանակեց, որը վարքի մաքրությամբ հավասար էր իր հորը: Եվ ուղարկեց նրան իր փոխարեն Նիկիայի ժողովին, որ այն ժամանակ եղավ՝ հերքելու համար արիտականների աղանդը:

Եվ Արիստակեսը, ժողովի կանոններով վերադառնալով, սկսեց պայծառացնել եկեղեցու կարգը Հայոց աշխարհում և հանդիմանել բոլոր հանցավորներին:

Իսկ Չորրորդ Հայքի վերակացու Արքեպիսկոպոս, որ նույնպես հանդիմանվել էր սրբից, իր անիրավ գործերի համար. սպանեց նրան նեկգությամբ, մինչ երանելին գալիս էր Ծովհազ գավառի ճանապարհով, ու վախճանալով Տրդատից, փախավ Կիլիկիայի Տաքսոն քաղաքը:

Երանելի հայրապետը վկայական մամուլ ավանդեց իր հոգին Աստծուն Տրդատի թագավորության 50-րդ տարում:

Եվ իր աշակերտները ամփոփեցին նրա մարմինը Թիլ ավանում:

Հատված շարականից

Աստուածային հատույ հարցն սրբոց
դասանումն.

Ծագեցաւ քն ընդհանոր լոյս
հայաստանեայց սուրբ Ռըստակէս.
Անդադար բարեխօսեա վասն անձանց
մերոց:

Վրթանէս հայրապետ

Ա. Գրիգոր Լուսավորչի ավագ զավակն է, ծնված Կեսարիայում շուրջ 263 թ.-ին: Վրթանէսը մանուկ հասակից ապրել է աշխարհական կյանքով և, ամուսնանալով, երկու որդիներ ունեցել՝ Գրիգորիս և Հուսիկ անուններով: Արիստակէս հայրապետի հետ միասին ընտանիքով եկել է Հայաստան և իր եղբոր անմիջական գործակիցն ու խորհրդականը եղել հայրապետական գործերի մեջ:

Վրթանէսը, այրիանալով, իր եղբոր մահից հետո բազմել է հայրապետական Աթոռին, 333 թ.-ին:

Վրթանէս հայրապետը եղել է ինչպես եկեղեցական, այնպես էլ քաղաքական մեծ գործիչ: Իր հայրապետության առաջին իսկ օրից կանգնել է հայոց պետության կողքին, իր խորհուրդներով և գործնական միջոցներով միշտ օգտակար է եղել ինչպես Խոսրով Բ, այնպես էլ Տիրան թագավորների համար: Հատկապես մեծ է Վրթանէս հայրապետի դերը Խոսրով Բ թագավորի օրով հայ պետականության պահպանման ու ամրապնդման գործում՝ ընդդէմ պարսկական բռնակալության և կենտրոնախույս ու հեթանոսական կրոնի սիրահար հայ նախարարների: Իր այս գործունեության պատճառով էլ հաճախ նրա դէմ դավեր են նյութվել, որոնք բոլորն էլ ձախողվել են՝ Աստուծո օգնության շնորհիվ:

Մահացել է խոր ծերության հասակում, 341 թ.-ին:

Վրթանէս հայրապետի մարմինը ամփոփված է Դարանաղյաց զավառի Թորդան ավանում, Լուսավորչի կողքին, իրենց տոհմական գերեզմանոցում:

Հայ եկեղեցին նրա հիշատակը նշում է Լուսավորչի որդիների և թոռների միացյալ տոնին:

Վկայաբանությունը.— Յայամատուրք, Կ. Պոլիս, 1843 թ., Բ 266—267:

Արիստակէսից հետո թագավորի կամքով հայրապետական Աթոռին հաջորդեց նրա ավագ եղբայր Վրթանէսը, որը փալեց հայրապետական Աթոռի վրա նույն մաքրությանը և ուսուցանող վարդապետությանը՝ խրատելով և հանդիմանելով:

Մի անգամ Վրթանէսը թագավորի հետ գնաց Տարոնի սուրբ Կարապետ վկայարանը: Այնտեղ դավադրությամբ սպանվեց թագավորը: Լեռան բնակիչները ցանկանում էին սպանել նաև սրբին, սակայն աներևոյթ մի գործություն կապեց նրանց ձեռքերը այնպես, ինչպես դա պատահեց Եղիսեի հետ: Եվ Վրթանէսը, ազատվելով նրանցից, ողբաց աշխարհի անիշխանության համար:

Եվ 15 հայրապետական տարիներից հետո մահացավ, և նրա մարմինը ամփոփեցին Թորդանում:

Հատված շարականից

Բանաւոր հօտին Քրիստոսի ընտրեալ հովի
քաջ.

Ի հօրէն լուսոյ բոխեալ շառաիղ բարի
տէր Վրթանէս.
Անդադար բարեխօսեա վասն անձանց
մերոց:

Գրիգորիս աղվանների
հայրապետ

Վրթանէս հայրապետի ավագ որդին է, ծնված 295 թ. Կեսարիայում:

310 թ. հոր հետ եկել է Հայաստան և կրթվել ու մեծացել Տրդատ թագավորի արքունիքում:

Գրիգորիս հայրապետը 320-ական թթ. Գրիգոր Լուսավորչի ձեռքով ձեռնադրվել է եպիսկոպոս աղվանների համար: Հիմնելով և բարեկարգելով Աղվանից երկրի եկեղեցիները, նա անցնում է մագքույթների լեռնասահմանները և Կասպից ծովի եզերքին, Վատնյան դաշտում, հանդիպում է Սանեասն թագավորի բանակին: Թագավորը սիրով ընդունում է Գրիգորիս հայրապետին և թույլատրում նրան քարոզելու քրիստոնեությունն իր բանակի մեջ:

Ակզբնական շրջանում Գրիգորիսի քարոզչությունը հաճելի է թվում մագքույթներին, սակայն հետագայում երբ իմանում են, որ քրիստոնեությունը արգելում է ավարառությունը, սպանությունը, անբարոյականությունը, երես են թեքում քրիստոնյա հայրապետից: Ոմանք էլ Գրիգորիսի քարոզչության մեջ տեսնում են հայոց թագավորի մի խորամանկությունը, ըստ որի մագքույթները քրիստոնյա լինելով այլևս չէին արշավի Հայոց երկրի վրա: Եվ որոշում են սպանել Գրիգորիսին:

Սուրբ հայրապետի նահատակությունը տեղի է ունենում նույն Վատնյան դաշտում: Անորենները Գրիգորիսին կապում են մի կատաղած ձիու պոչից և ձին մտրակելով բաց թողնում քարերի մեջ:

Սրբի արյունաթաթախ մարմինը ամփոփվում է Աղվանից Հաքանո գավառի Ամառազ գյուղում, որտեղ հետագայում կառուցվում է Ամարագուսի ա. Գրիգորիս վանքը:

Գրիգորիսի հիշատակը հայ եկեղեցին տոնախմբում է տարին երկու անգամ. առաջինը՝ Լուսավորչի որդիների և թոռների միացյալ տոնի հետ, երկրորդը՝ ա. Խաչի հիմնադրող կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը՝ իբրև «Գիտ Աշխարհ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին»:

Վկայաբանությունը.— Յայսմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 266—167:

Վրթանես կաթողիկոսի ժամանակ հյուսիս-արևելքի վերին կողմերից եկան Տրդատ թագավորի մոտ և իրենց համար մի եպիսկոպոս խնդրեցին սուրբ Գրիգորի ցեղից, որովհետև լսել էին նրա անունը և փառավոր հռչակը: Տրդատը նրանց եպիսկոպոս տվեց Վրթանեսի ավագ որդի Գրիգորիսին, որ մանուկ էր հասակով, սակայն կատարյալ՝ հավատով:

Սա, գնալով այն աշխարհը, հայրերի առաքինությամբ կատարում էր իր գործը: Բայց երբ սուրբ Տրդատի վախճանը լսեցին բարբարոսները, որոնք նախկինում կրժտանված էին սուրբ հայրապետից, ձիու ետևից քարշ տալով սպանեցին ամենիմաստ մանկանը Վաստիարյան դաշտում, Կասպիական ծովի մոտ:

Նրա աշակերտները իր մարմինը բերեցին և թաղեցին փոքր Սյունիքում՝ Ամարյան ավանում:

Հատված շարականից

Դասակցեալ անմարմնոցն մաքուր

կուսութեամբ,

Շշմարիտ քահանայապետ վկայ Քրիստոսի
սուրբ Գրիգորիս.

Անդադար բարեխօսեա վասն անձանց

մերոց:

Հուսիկ հայրապետ

Վրթանես հայրապետի կրտսեր որդին էր, ծնված 295—300 թթ.:

310 թ. հոր հետ եկել է Հայաստան և զինվորական կրթություն ստացել արքունիքում:

Ամուսնացել է Խոսրով թագավորի դուստր Խոսրովուհու հետ և ունեցել երկու զավակ՝ Պապ և Աթանագին:

Իր հոր մահից հետո բազմել է հայրապետական գահին, 341 թ.:

Տեսնելով Տիրան թագավորի և հայ նախարարների որոշ հեթանոսական հակումները, բանադրական վճռով արգելել է նրանց մոտքը եկեղեցի: Այդ իսկ պատճա-

ռով նահատակվել է բրածեմ լինելով, Տիրան թագավորի հրամանով՝ 347 թ. Ծովագ գավառի Բնաբեղ արքունի բերդի եկեղեցում: Նրա աշակերտները մարմինը տարել և ամփոփել են Դարանաղաց գավառի Թորդան ավանում:

Հայ եկեղեցին Հուսիկ հայրապետի հիշատակը նշում է Լուսավորչի որդիների և թոռների տոնին:

Վկայաբանությունը.— Յայսմատուրք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 266—267:

Վրթանեսին հաջորդեց իր որդին՝ Հուսիկը, որի կաթողիկոսության ժամանակ ամբարիշտ Հուլիանոսն իր նկարն ուղարկում է Հայաստան Տիրան թագավորին, որը, առնելով, պատվով զետեղում է արքունական եկեղեցում: Իսկ սուրբ Հուսիկը, մտնելով, ոտնակոխ է անում նկարը և կտոր-կտոր անում: Չայրացած Տիրանին Հուսիկը պատասխանում է, թե դա Հուլիանոս կայսեր մի խորամանկությունն է, որով նա սատանաների պատկերներ է նկարել տալիս, իր դեմքի տակ:

Իսկ Տիրանը սաստիկ բորբոքված չարությամբ, հրամայում է բրածեմ անել նրան: Եվ այստեղ տանջահար սուրբ հայրապետը իր հոգին ավանդում է Աստծուն:

Իսկ մարմինը ամփոփվում է Թորդանում, իր հոր մոտ:

Հատված շարականից

Գովեալդ ի վկայս հօրն մեծի համանման.
Քաջութեամբ զանօրինաց խորտակեալ
զպատկերն տէր սուրբ Յուսիկ.
Անդադար բարեխօսեա վասն անձանց
մերոց:

Դ անիել Ա ս ո թ ի

Եղել է ա. Գրիգոր Լուսավորչի աշակերտը և հոգևոր զավակը: Աշտիշատի եպիսկոպոսն էր և հայրապետական Աթոռի կալվածքների վերակացուն:

Հուսիկի մահից հետո Տիրան թագավորը ցանկացել է նրան բազմեցնել հայրապետական գահին, սակայն սուրբը մերժել է և հանդիմանել թագավորին Հուսիկի սպանության համար:

Խեղդամահ է եղել Տիրանի հրամանով և թաղվել Հացյաց Դրախտ կոչված ձորում, «որ էր Դանիելի սովորական ճգնարանը, և ուր է այժմ Կոփա ա. Դանիելի վանքը, որուն մեջ պահված է սուրբին գերեզմանը, գոր մենք ալ տեսած ենք» (Մ. ա. Օրմանյան):

Հայ եկեղեցին Դանիել Ասորու հիշատակը նշում է Լուսավորչի որդիների և թոռների

րի տոնին, իբրև հոգևոր եղբայրակից, թեև ոչ մի մարմնավոր ազգականություն չունի:
Վկայաբանությունը.— Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 266—267:

Հուսիկի մահից հետո Տիրանը ցանկացում է հայրապետական Աթոռին բազմեցնել Դանիել մեռակյացին, որովհետև նա սուրբ Գրիգորի աշակերտն էր: Եվ նա անեծքներով հանդիմանում է թագավորին Հուսիկի սպանության համար, որի հետևանքով և զայրացած թագավորը հրամայում է խեղդամահ անել նրան: Բայց և սրբի անեծքներն էլ շուտով կատարվում են Տիրանի վրա՝ կուրացնելով նրան:

Իսկ Դանիելի մարմինը ամփոփվում է իր մենարանում՝ Հացյաց Դրախտում:

Հատված շարականից

Երկնալոնցն ի լերկրի հաղորդ ճգնութեամբ.
 Յանդիմանելով զթագաւորն կատարեցար
 վասն անուանն Տեառն սուրբ Դանիէլ.
 Անդադար բարեխօսեա վասն անձանց
 մերոց:

Ա ն տ ո ճ և Կ ր ը ի դ ե ս
 ճ գ ն ա վ ո թ ը ե ր

Բնիկ կեսարացի հույներ, որոնց Հայաստան բերեց ս. Գրիգոր Լուսավորիչը այլ կրոնավորների հետ: Սրանք աչքի էին ընկնում իրենց սրբակրոն ճգնությամբ:

Երբ Լուսավորիչը Տարոնի Իննակնյան բարձունքի Գիսանեի մեհյանը քանդելով տեղը ս. Կարապետ եկեղեցին և վանքը հիմնեց, այս երկու ճգնավորները հաստատվեցին այնտեղ և 40 տարի ճգնելուց և նոր կրոնավորներին վարժեցնելուց հետո մահացան 342 թ.:

«Ս. Կարապետի վանքին մոտ պզտիկ մատուռի մը մեջ կպահվին երկու սուրբերուն գերեզմանները, իսկ իրենց հիշատակը տոնելի է ուրիշ հայ ճգնավորներու հետ» (Մ. ա. Օրմանյան):

Հատված շարականից

Սուրբ երջանիկ երկնահանդես ճգնող
 Անտօն և Կրօնիդէ.
 Ի հողանիւթ ծնեալ զարմէս՝ գերազանցեալ
 ի բնութենէս.
 Զձեզ պարգևեաց սուրբ Ղեռնդէս՝ մեզ
 երկնային հրեշտակք լերկրէս.
 Ի վշտալից մարմնոյ ախտէս՝ փարատեցէք
 ի խոցմանէս:

Ս տ ե փ ա ն ո ս Ո լ լ ն ե ց ի

Ծնվել և ապրում էր Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքում, ուր իր պատանեկությունն անցկացրել է Կոստանդին բարեկրոն քահանայի հոգևոր շնչի տակ:

Հուլիանոս ուրացողի հալածանքների ժամանակ նահատակվել է իր ընտանիքի և այլ քրիստոնյաների հետ, 362 թ.:

«Նահատակության տեղը եղած է Կանչի բերդը, ուր ցարդ կպատվի նահատակներուն գերեզմանը, ոչ շատ հեռու Ուլնիս կամ Հուլիսպոլիս քաղաքեն, որ է այժման Զեյթունը» (Մ. ա. Օրմանյան):

Հայ եկեղեցին Ստեփանոս Ուլնեցու հիշատակը տոնում է ամսուվա շրջանին, Գոհարինյան սուրբերի հետ միասին:

Վկայաբանությունը.— Յայսմատորք, Կ. Պոլիս, 1834 թ., Բ 87:

Քրիստոսի վկա սուրբ Ստեփանոսը ապրում էր Հուլիանոս ուրացողի ժամանակ և գտնվում էր այն լեռան թաքստոցում, որ մոտ էր այն դղյակին, որ Կայնչի է կոչվում: Եվ մի հովիվ, տեսնելով նրան, մատնում է Սոկրատես դատավորին և նույն պահին դիվահար լինելով մահանում:

Եվ սուրբը, կանգնելով դատավորի առաջ, խոստովանում է Քրիստոսին համարձակությամբ: Դատավորը խիստ տանջանքների է ենթարկում նրան և տեսնելով, որ չի կարող կրոնափոխ անել, հրամայում է Ստեփանոսի մորը այլ վկայությունների հետ հրով այրել և սուրբ Ստեփանոսին էլ սրախողխող անել այլ ընկերների հետ: Եվ այսպես քարի խոստովանությամբ նահատակվեցին նրանք նավասարդի 8-ին (օգոստոսի 18-ին):

Հատված շարականից

Սրբոյն Ստեփաննոսի մեծ նահատակին.
 Այսօր նմանեալ նախավկային,
 Զանուանակրթութիւնն յինքեան բերեալ և
 գհանդէս մարտին.
 Պսակեցաւ նմանեալ նմին:

Խ ա դ ե պ ի ս կ ո պ ո ս

Եղել է Ներսես Մեծ հայրապետի անմիջական գործակիցն ու հավատարիմ հետևիկը՝ Հայաստանում կրթական-քարեգործական հաստատությունների ստեղծման գործում 4-րդ դարի կեսերին:

Եղել է նաև կաթողիկոսական տեղապահ: Հայամալորքում Ներսես Մեծ հայրապետի վարքի մեջ Խադեպիսկոպոսի մասին առված է հետևյալը.

«Ներսես հայրապետը եպիսկոպոս է ձեռնադրում Խաղ սարկավագին և նրան նշանակում հիվանդանոցների և աղքատների խնամության տեսուչ:

Խաղ եպիսկոպոսն աներկյուղ հանդիմանում էր Արշակ թագավորին՝ նրա սխալների համար: Եվ քանի որ Արշակ թագավորը Խաղին հանդիմանում էր պճնասիրության և ձիասիրության մեջ, եպիսկոպոսն սկսեց խարազնագգեստ հագնել և էշով ման գալ ու շարունակեց հանդիմանել Արշակին: Իսկ թագավորը բարկանալով քարկոծել տվեց նրան»:

Ըստ հայ պատմիչներ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի, Խաղ եպիսկո-

պոսն ազատվում է քարկոծումից և ապրում նաև Պապ թագավորի ժամանակ:

Հայ եկեղեցին Խաղ եպիսկոպոսի հիշատակը տոնում է Ներսես Մեծ հայրապետի հետ միասին, Հոգեգալստյան Դ կիրակիի նախընթաց շաբաթ օրը:

Հատված շարականից

Քահանայապետ ընտրեալ արժանապէս
շնորհօք Հոգւոյն
Բաշխեցեր զփրկական մարմին և զարինն
Տեառն.

Յորում հրեղէն սիւն ի յերկնից իջեալ
Բարեխօսեա առ Քրիստոս վասն անձանց
մերոց:

(Ծարունակելի)